


Ստեփան Զորյան

ՀԱՅՐԻ ԲԼԵՈՒ



10 ՊԵՏՎՈՎ 37

891.990
9-83

891.935

2-83

Մ

Ա. Զարզան

2011-05,

ՀԱՅՈՐԻՑ ԲԼԵՈՒՆ

ՅԵՐԿՈՈՐԴ
«ՀԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ»

Հ

ԹԱՏԿԱՆ
ՀԵԿՅԵՍ ԿԿ ԿՐՅ ՄԱՆԿ. ՅԵԿ ՊԱՏ. ԳՐԱԿ. ԲԱԾՈՒ
ՅԵԼԵՎԱՆ
1937

Լինում ե, չի լինում մի թագավոր։ Այս թագավորն իր պալատի առաջ ունենում եմի մեծ այգի՝ աստծու բարիքով լիքը, այնքան առատ, այնքան հարուստ ու գեղեցիկ, վոր աշխարհի ամեն կողմից մարդիկ գալիս են տեսնելու։ Ի՞նչ պտուղներ, ի՞նչ կանաչ, ի՞նչ ծաղիկներ, աչքդ բարին տեսնի։ Ու այգու մեջ ել զանդակի պես մի աղբյուր։ Բայց այդ այգու պտուղները թագավորը վո՛չ ինքն ե ուտում, վո՛չ ել ուրիշի յետալիս։ Յեկ ահա որերից մի որ աղքատի մինը զալիս ե այդտեղ վողորմություն ուզելու։ Թագավորի այգեպանը, ինչպես ուրիշներին, սրան ել վոչինչ չի տալիս և գեռ բարկանում ե ու քըռմ։

— Կո՛րիր, ասում ե, դու եյիր պակաս թագավորի այգուց բան ուզես։

Յետ ե դառնում աղքատն եպտեղ ու անիծում։

— Թող չորանա ձեր այգին. պտուղ չտա ել յերբեք, և հավիտյան կարոտ մնաք կանաչ ծառի ու պտուղի։

Ասում ե, չի ասում, խոսքի կեսը դեռ բերանում, մին ել տեսնում են այգին փոխվեց — ծառերը տերեվաթափ յեղան, թուփ ու ծաղիկ խանձվեցին, կանաչները սեվացան ու աղբյուրը չորացավ։


Լուրը տվին թագավորին, ու փրփուր կտրեց թագավորն իր գահին։

— Ով ե, ասավ, համարձակվել այդպես. կանչեցեք շուտ աղքատին այստեղ…



1696

38



Մարդիկ յելան ամեն կողմ և մունետիկ քցեցին:
Աղքատը չերևաց: Զիեր հեծան ու սլացան ամեն
ձամբռով:

Բայց աղքատի հետքն ու շուքը չդառն:
— Ինչ անենք հիմի; վոր մեր այգին կանաչի,
ասավ տիտուր թաղավորն իր մեծերին:

Ու մեծերը խորհուրդ տվին.
— Ապրած կենաս, մեծ թաղավոր, կանչիր յերկրի
բոլոր գիտուններին և իմաստուններին բոլոր. Թող ա-

մենքը գան խորհրդի ու միտք անեն թե վոնց անենք,
վոր մեր այգին կանաչի:

Ու կանչեցին յերկրի բոլոր գիտուններին և իմաստուններին բոլոր: Յեկավ հազար ջահել խելոք, յեկավ հազար ձերմակ մորուք: Խորհուրդ արին յոթը որ,
խորհուրդ արին յոթը գիշեր ու ասին.

— Թաղավորն ապրած կենա, պետք է շինել մի
տաճար՝ հազար սյուն, քառսուն գմբեթ, մի այնպիսի
տաճար, վորի նմանը չինի ու այնտեղ աղոթել ասոն-
ծուն, վոր նա գթա, այդուն նորից կանաչ տա:

Հավան կացավ թաղավորն այս մտքին ու հիմք
գրեց յեկեղեցուն: Կանչեց յերեք հարյուր հազար բան-
վոր, վոր քար կտրեն, յերեք հարյուր հազար մարդ,
վոր քար կրեն, յերեք հարյուր հազար քարտաշ, վոր
քար տաշեն, յերեք հարյուր հազար վարպետ, վոր
պատ շարեն: Յեկան բոլորն ու թրբ'խկ հա՛ թրբ'խկ,
թրբ'խկ հա՛ թրբ'խկ — քար կտրեցին, քար կրեցին,
քար տաշեցին, պատ շարեցին: Ու յոթը տարում կանդ-
նեցրին մի տաճար. ի՞նչ տաճար, ինքն աղոթել եր վոր
կար — հազար սյուն, քառսուն գմբեթ:

Յերբ ամեն ինչ յեղավ պատրաստ, մեծ հանգեսով,
յեպիսկողոսով որհնեցին ու սծեցին, և թաղավորը
կանգնեց աղոթքի: Բայց հազիվ սկսել եր, բուք բարձ-
րացավ տաճարում և մի ալեվոր յերեվաց նրան.

— Ամեն բան լավ ե, ասավ, թաղավոր, տաճա-
րիդ միայն մի բան ե պակաս:

Զարմացած թաղավորն ուզեց հարցնել, թե ի՞նչ
է պակաս, — բայց ձերունին ինչպես յերեվացել եր,
այնպես ել աներեվույթացավ հանկարծ:

Մյուս որը թաղավորը հրամայեց քանդել յեկեղեցին և նորը չինել, վոր վոչ մի բան պակաս չլինի:

Քանդեցին և նորից — թրբ'խկ հա՛ թրբ'խկ, թրբ'խկ
հա՛ թրբ'խկ — յոթը տարում նորը կանգնեցրին:

Ոծելուց հետո թաղավորը նորից գնաց աղոթքի և
հազիվ սկսել եր, ձերմակ ձերունին յերեվաց նորից.

— Թագավոր, ասավ, ամեն բան լավ է, տաճարիդ
միայն մի բան ե պակաս...

Թագավորն ելի ուզեց հարցնել ինչ, բայց ծերութին
առաջվա պես չքացավ նորից:

Թագավորը հրամայեց կրկին քանդել տաճարը ու
նորը շինել, վոր վոչ մի բան պակաս չլինի:

Կրկին քանդեցին ու յոթը տարում կրկին նորը շի-
նեցին:

Դարձյալ ոծեցին ու թագավորը յեկավ աղոթքի:

Հազիվ սկսել եր աղոթքը իրա, ճերմակ ծերունին
յերեվաց դարձյալ:

— Թագավոր, ասավ, տաճարդ կատարյալ է,
պայծառ, միայն մի բան ե պակաս:

Այս խոսքի վրա թագավորը բռնեց նրան ու «ի՞նչն
է պակաս, ասա՛», հարցրեց:

— Թագավոր, ասավ ծերունին, — աղոթքով այ-
դին չի կանաչի. աղոթքի տեղ ուրիշ բան ե հարկավոր:

— Ի՞նչ, ի՞նչ, — հարցրեց թագավորն անհամ-
րեր. — ասա տեսնեմ, ո՞վ ծերունի. դրա համար յես
չեմ խնայի իմ արքայական գանձն ու վոսկին; միայն
թե իմ այդին առաջվա նման կանաչի նորից:

— Վոչ, թագավոր, — ասավ ծերունին. — Նա ձեռք
չի բերվի գանձով ու վոսկով և վո՛չ ել արքայա-
կան խոսքով... Քո տաճարին և այլուն հարկավոր և
Հազարան Բլրուլ:

— Իսկ վո՞րտեղ ե դա, վորտեղից բերենք այդ
ըլլուլը, — հարցրեց թագավորն ուրախ:

— Ով թագավոր, ասավ ծերունին, հեռու յե նա.
պետք ե գնալ Չոր-Չորստան, Անդ-Անապատ, ուր քար-
վան չի քոչում, վոր հավք չի թռչում, այնտեղ, ուր
յերենք մարդու վոտք չի տեսել. իսկ ճամբեն նրա
ծածկված ե արյուններով, դիակներով, և վոչ մի հո-
ղածին դեռ չի հասել այնտեղ...

Ասավ ծերունին ու անհետացավ նորից:

Թագավորը մնաց մենակ իր մտքերի հետ: Տիտու-

տրտում միտք եր անում, թե վո՞նց բերի Բլրուլը Հա-
զարան, վոր իր այգին կանաչի նորից: Տիտուր-տրտում
միտք եր անում որեր, ամիսներ... Միտք եր անում ու
Հալլում...

2

Այս թագավորն ուներ յերեք տղա՝ Խարին, Զարին
ու Սրին: Յերկու մեծը խելոք եյին ու թագավորի սի-
րելին, իսկ փոքրը խելքից պակաս եր ու հիմար: Մինչ
մեծերը նստում վեր եյին կենում իշխանների ու մեծա-
մեծների հետ, կոփիվ եյին գնում ու վորսի, նիզակ եյին
խաղում ու ջիրիդ, փոքրը՝ Սրին գնում նստում եր
ծառա մարդկանց մոտ ու խաղում նրանց յերեխանց
հետ: Ու այդ պատճառով պալատում վոչ-վոք չեր սի-
րում նրան: «Հիմար ե» ասում եյին ու թողնում, վոր
դնա ծառա մարդկանց մոտ: Ու ամբողջ որը գոմում,
ախոռում, չեր ել նայում ի՞նչ ե կատարվում իրենց
պալատում: Այս ինչ մեծ յեղայրները հենց վոր տե-
սան իրենց հորը տրտում, ծունկ չոքեցին նրա առաջ ու
հարցըին տիխուր.

— Ի՞նչ վիշտ ունես, հայրիկ, ասա՛ մեղ, ի՞նչ իղձ ու-
նես — մենք կատարենք:

— Վիշտս խորն ե, — ասավ թագավորն ու տըն-
քաց, — և դուք չեք կարող այն բուժել, իսկ իղձս —
անհասնելի...

— Ասա՛, հայրիկ, ասա՛ ինչ վոր ունես: Ի՞նչ վոր
ասես մենք կկատարենք, ի՞նչ վոր ուզես մենք կբե-
րենք...

Վորդիքն այսպես շատ վոր խնդրեցին, թագավորը
սիրտը բաց արավ ու բոլորը պատմեց, թե այսպես ու
այսպես. վորպեսզի մեր չորացած այգին կանաչի,
ովետք ե բերել Բլրուլը Հազարան:

— Մենք կրերենք, ասին Խարին, Զարին միտուին:

— Բայց հեռու յե, վորդիք, ու ճամբեն նրա մութ
ու անհայտ: Պետք է զնալ հեռու, հեռու — Չոր-Չորս-
տան, Անդ-Անապատ, ուր քարվան չի քոչում, ուր
հավք չի թոշում...

— Մենք կրերենք, ասին Խարին, Զարին ու վեր
կացան, զրահ հաղան, զենք կապեցին, ձիեր հեծոն,
պաշար առան, ճամբա ընկան:

Այդ ժամանակ Արին խաղ եր անում ախոսում:
Հենց վոր լսեց յեղբայրներն ուր են զնում, ինքն ել
զրահ հաղավ, զենքեր կապեց և ձի նստեց ու միտցավ
նրանց:

— Վոչինչ, թող գա, ասին յեղբայրները, ճամփին
մեզ ծառայություն կանի:

Ու յերեքով զնացին:

Գնացին, զնացին, որեր, գիշեր զնացին, զնացին
զեպի հեռու, հեռու—Չոր-Չորստան, Անդ-Անապատ,
ուր քարվան չի քոչում, ուր հավք չի թոշում:

Գնացին տեսան յերեք ճամփա — մեջտեղը մի ծե-
րունի նստած:

— Բարի աջողում, պապի, ասին:


— Բարին ձեր արևին, տղերք:

— Մի ասա մեզ, պապի, ո՞ւր են զնում այս ճամ-
փաները ջոկ, ու ի՞նչ ճամփաներ են սրանք:

— Այս մեկը, ասավ ծերունին, զնում ե Բաղդազ.
սրանով հաղարը զնում ե, հաղարը գալիս. այս մյուսը
զնում ե Խորասան, սրանով հաղարը զնում, մինը
գալիս. իսկ այս վերջինը... շատ զժար ճամփա յե այս
վերջինը... Սրանով ո՞վ զնաց, հուր-հավիտյան կեր-
թա՛, կերթա՛, ել չի՝ դառնա...

Յեղբայրն այստեղ կանգնեցին ու միտք արին,
թե վո՞ր ճամփով զնան:

— Յեկեք դուք զնացիք Բաղդազ ու Խորասան,
ա-
սում ե Արին, յես ել կերթամ ես ճամփով, վոր ով
զնում՝ յետ չի դառնում:



— Լավ, ասին յեղբայրները և ուրախացան իրենց
մտքում, վոր կազառակեն, վերջապես, հիմարից,
ու յերեքը միտօին պայման դրին, թե ո՞վ շուտ վերա-
գառնա — այստեղ սպասի մյուսներին:

Ասին, համբուրդիցին ու ճամփա ընկան:

Մեծ յեղբայրը զնաց զեպի Բաղդազ. զնաց ճա-
մապարհի կեսին հանդիպեց մի քյոշկ ու սարայի.
կանգնեց ու մտածեց. «Չուր, ասավ, ինչո՞ւ դնում

սպանվեմ, լավ ե մտնեմ այս սարայը ծառայությունը անեմ, ապրեմ»...

Միջնեկ յեղբայրն ել զնաց գեղի Խորասան։ Գնաց, զնաց — շատն ու քիչը ճամփան գիտի — զնաց շատ փորձանքների մեջ ընկալ, ձին ու շորերը ծախեց կերավ ե, վերջը, չոփի պես տկլոր, ընկավ Խորասան ու դարձավ բաղնիսի ծառա։

Սրանք թող մնան իրենց գործին, մենք լուր տանք փոքր յեղբորից։

3

Յեղբայրներից բաժանվելով զնաց Արին, զնո՞ց զնաց այն տեղերը, ուր չորաստան ե, անապատ, ուր քարվան չի քոչում, ուր հավք չի թոշում։ Գնաց հասալ մի աշխարհ, ուր կարմիր եր ամեն ինչ. ալ կարմիր եր հողը, կարմիր եր ծառ ու քար, ալ կարմիր եր յերկինքը ու արել պայծառ։ Գնաց, զնաց, շատն ու քիչն ինքը գիտի ու իր ձին, զնաց, մին ել տեսայ մի ապարանք։ Ի՞նչ ապարանք — ամրողը զմբուխս ու լալ, հակինթ, ալմաստ ու զոհար. փայլիլում և արելի տակ կարմիր փայլով հրեղեն։ Ինքը յերկինք ե հասնում, բայց վոչ դուռ ունի, վոչ պատուհան։

«Ո՞վ ե, տեսնես, ապրում այստեղ», ասավ Արին ինքն իրեն, ու նայեց վերեվ, ներքեվ, մարդ-չերեվաց վոչ մի տեղ։ Մին ել — ահա՛ մի — վերի. . . վերի մի ասի. — մի լուս արեգակ — ձայն ե տալիս վերեից։

— Ո՞վ ես գու, խեղճ տղա. ափսո՞ս քեզ, ջահել տղա. . . Քանի շուտ ե հեռացիր, թե չե հիմի կարմիր Դեվը կերեվա. . .

— Ի՞նչ ես վախեցնում, վերի քույրիկ, ասավ Արին ներքեվից. — զեռ մի պատիկդ չառած, Հացիդ կտորը չկերած, զառը չիրուխտ չքաշած, ինձ վախեցնում ես կարմիր Դեվով։

— Դու ինձ լսի՛ր, այ տղա, — ասավ վերին զար- չուրած, — շո՛ւտ հեռացիր այստեղից. . .

Բայց տղան կանգնել՝ չի շարժվում տեղից։

— Իսկ ո՞վ ես գու, վերի քույրիկ, — ասավ Արին ներքեվից. — Ի՞նչ ես անում այս ամրոցում, վոր վոչ գուռ ունի, վոչ պատուհան. ո՞վ ե բերել, ո՞վ ե փակել քեզ այստեղ։

— Ո՛, այ տղա, յես գերին եմ Կարմիր Դեվի, ասավ աղջիկը լալով. — Նո յեկավ մեր աշխարհն այնե- րեց, ինձ հափշտակեց մեր անից ու գերի բերեց։ Դե շո՛ւտ, շո՛ւտ հեռացիր դու այս արյունոտ աշխարհից. . . Տես նրա կերած մարդկանց արյունից կարմրել են հող ու յերկինք, կարմրել են թուփ ու ծառ, կարմրել ե ա- րեվը պայծառ։

— Զո՞ւր ե, ասավ, վերի քույրիկ։ Ով ել կուզի թող զա — յես չեմ զնա։ Յես չեմ թողնի քեզ մենակ։ Պետք ե փրկեմ քեզ այստեղից։

— Աման, ասավ վերին լալով. — մի տալ քեզ մա- հու բերան. թող յես մնամ այստեղ գերի, միայն դու շահել կյանքը փրկի. . .

Այսպես շատ խնդրեց, աղաչեց վերին, բայց հի- մար Արին վոտ չփոխեց։

— Վոր այլպես ե, ասավ վերին, արի պահեմ քեզ ամրոցում, վոր գեվը զա, քեզ չտեսնի։

— Շնորհակալ եմ, ասավ, վերի քույրիկ. յես հենց գեվի համար եմ յեկել. յես կմնամ այստեղ, միայն ասա, թե վո՞ր կողմից ե նա զալու։

Այսպիշատավ, մին ել ահա հոլը շարժվեց դղրդո- ցով ու սարի գլխին գեվն յերեվաց իր ալարով. ձեռ- ներին բռնել եր նա յերկու գերան, ամեն մինը քառ- սուն զաղ, ու զրանց արանքն արել ամեն տեսակ շունչ ու զաղան — վագր ու առյուծ, ինձ ու արջ, գել ու աղվես, յեղնիկ, յեղջերու, ել ի՞նչ իմանաս ինչ կեն- չուրած, ապա մի պատիկդ չառած, Հացիդ արած բերում եր ամ- զանի — բոլորն այսպես կալմեջ արած բերում եր ամ- զանի — բոլորն այսպես կանչում, ճշում եյին, վոռնում եյին աղեկտուր ու զարհուր։

Յեկավ դեք ինչպես վարար մի գետ, յեկավ ինչպես ալավ բռնած կարժիր կրտկ և դեռ հեռվից, տղին տեսավ թե չե, վորոտաց.

— Ո՞վ ես, ասավ, ո՞վ հողածին, վոր համարձակը վել ես մտնել իմ հողը, մի՞թե իմ անունը չես լսել դու... Հազար չտեսար դյուու ու քաղաք ամայի. վո՞նց չես տեսել վոսկորները ձորը լցրած... Բայց լավ ե, ասավ, քու վոտով ես յեկել, յերկար ժամանակ մարդու միս չեմ կերել...

— Դեռ մի դրանց ազատի, հետո խոսի, ասավ Արին ու իջավ ծիուց:

Դեվը ծիծաղեց.

— Ո՞վ չնչին մարդ, ասավ, ո՞վ ես դու, վոր համարձակվում ես այդպես լեզու բանեցնել իմ դեմ. քանի հազար մարդ եմ կերել ու քեզնից ել կտրիճ...

— Ով ել լինեմ, քո հողեառն եմ յես, ասավ Արին ու կանգնեց համարձակ:

Մոնչաց դեվը, հուր ու կրակ թողեց բերանից թողեց բերած գաղաններին ու գնաց տղի վրա: Տարավ բերավ իր գերանը քառոսն գազ: Գետինը թնդաց. նրա հարվածից, հողն ու վոշին բարձրացան ամպի նման:

— Ախոս՛ս, ասավ դեվը, բան չմնաց այդ մարդուց, վոր մի համն առնեցի:

— Մեկ ել արի, ասավ Արին փոշու ամպի միջից:

Դեվը կատաղեց, դեվը փրփրեց, ու գնաց յեկավ այս անդամ հեռու տեղից: Յեկավ ու գերանը զարկեց ուժով: Հողն ու վոշին գարձյալ ամպի նման բարձրացան յերկինք:

— Ախոսոս, ասավ դեվը, գնաց կորավ հողածինը հողի մեջ, մի մտու միս ել չմնաց, վոր դնեյի ասամիս տակ:

— Հա՛-հա՛-հա՛, ծիծաղեց Արին նորից փոշու ամպի միջից:

Դեվերը ծիծաղ չեն սիրում:

Այդ ծիծաղից դեվն ավելի կատաղեց, դեվն ավելի փրփրեց: Ու այս անգամ յերկու գերանն ել վրա ըերավ: Սար ու ձոր դղբացին, ու ել ավելի հող ու փոշի բարձրացավ յերկինք:

— Ախոս՛ս, ախոս՛ս, ասավ դեվը, այնպես զարկեցի, վոր հոտ քաշելու բան չմնաց: Ու մոտեցավ, վոր հոտ քաշի, տեսավ Արին կանգնած առաջին:

— Դե հիմա հերթի իմն ե, ասավ Արին ու նետն արձակեց:

Դեվը վոռնաց ու այս անգամ կրակի տեղ ծուխ արձակեց բերանից և թավալ-թավալ ընկավ գետին չունչը փչեց:

Այսուեղ Արին կտրեց դեվի ականջները ու տարավ կարմիր ամրոցում փակված աղջկան:

Փերին ուրախացավ ու փաթաթվեց տղի վզով:

— Դե հիմի, ասավ, դու իմն ես, յեռ քոնը, արի պատկվենք:

— Զե, ասավ Արին, — յես նպատակ ունեմ, պետք ե գնամ: Պետք ե դնամ բերեմ Բլբուլը Հազարան, վոր ժեր չոր այդին կանաչի:

— Վա՛յ, ասավ փերին, — մի՛ գնա, այ տղա. այդ համփան շատ դժար ճամփա յե: Արի, ավելի լավ ե, պատկվենք ու հանգիստ ապրենք մեզ համար:

— Զե, ասավ Արին, դու իմ մեծ յեղբոր նշանածը կլինես: Յես ուխտ ունեմ, պետք ե կատարեմ:

Ու նշան տվեց, նշան առավ և ճամփա ընկավ գնաց նորից:

Գնաց դեվի հեռու, հեռու, — Չոր-Չորստան, Անդ-Անապատ, ուր քարվան չի քոչում, ուր հավք չի բաշում...

Գնաց, գնաց, շատն ու քիչն ինքը գիտի ու իր ձին,
գնաց ընկավ մի աշխարհ, ուր սեվ եր ամեն ինչ. սեվ
եր հողը, սեվ-սեվ եյին ծառ ու քար, սեվ եր յերկին-
քը ու արեվ չկար:

Գնաց տեսավ մի սեվ ամբոց՝ դուռ-պատռւհան
դրած-փակած: Հոգնած, դաղրած իջավ ձիուց ու ամ-
բոցի դուռը թակեց: Մին ել ահա՛ մի աղջիկ — ի՞նչ
աղջիկ — վոչ ուտես, վոչ խմես, կանգնես ու նրա յե-
րեսին մտիկ անես... այդ սեվ ամբոցում մի լուս-ա-
րեգնակ... Յեկավ նազուկ քայլերով, դուռը բացեց
ու մնաց կանգնած:

— Բարի տեսանք, փերի քույրիկ, ասավ Արին ու
գլուխ տվեց:

— Վա՛յ, ասավ աղջիկը տխուր, — ո՞վ ես զու,
այ տղա: Վոր քամին ե քեզ բերել, ո՞վ ե զրկել քեզ
այստեղ... Շուտ, շուտ հեռացիր, թե չե հիմա Սեվ
Դեվը կզա, պատառ-պատառ կանի քեզ...

— Փերի քույրիկ, ասավ Արին, դեռ մի պատիվդ
շառառծ, հացիդ կտորը չերած, դառը չիբուխդ չքա-
շած — ինձ վախեցնո՞ւմ ես Սեվ Դեվով:

— Լսիր ինձ, այ տղա, չեմ խնայում քեզ հաց ու
պատիվ, բայց քանի գլուխդ ուսերիդ ե, հեռացիր
այստեղից... Գիտեմ, տեսնում եմ հաղթել, անցել ես
Կարմիր Դեվի յերկրից, բայց սա կարմիր Դեվ նման
չի: Սա մարդ ե կերել հազար-հազար, աշխարհներ ե
ավերել ու մոխիր թողել... Սա յոթը գլուխ ունի, յո-
թը բերան:

— Վնաս չունի, ասավ Արին, մի որ ծնվել, մի որ
պիտի մեռնենք. բայց մի ասա ո՞վ ես զու և ի՞նչ ես
անում այս սեվ աշխարհի, սեվ ամբոցում:

— Ախ, այ տղա, յես գերին եմ Սեվ Դեվի, ասավ
փերին լալով. — Նա ավերեց մեր աշխարհն ու ինձ բե-
րեց իրեն գերի:

— Լաց մի լինի, փերի քույրիկ, — ասավ Արին
աղջկան, — յես չեմ թողնի քեզ եստեղ, միայն մի քեչ
հաց տուր ուտեմ:

Աղջիկ-իերին չատ զարմացավ տղի վրա, ավսո-
սաց, բայց քանի վոր սոված եր — խղճաց ու կանչեց
վերելի:

Աղջիկը հաց բերավ, հաց կերան, խոսեցին, մին ել
ահա՛ տունը գողաց չիմքից:

— Այս ի՞նչ բան ե, հարցրեց Արին, տունն ինչո՞ւ
այսպիս զողաց հանկարծ:

— Վայ, ասավ փերին, դեվը գալիս ե, այ տղա-
մբի պահեմ քեզ:

— Ի՞նչ պահես, — ասավ, — զայիս ե, թող զա:
Յես հենց նրա համար եմ յեկել:

Մի քեչ կացան՝ դեվը յեկավ. յեկավ ինչուս մի
սեվ սար: Յոթը զլուխ ուներ, յոթը բերան: Յեկավ,
բերեց անթիվ անսուն ու գաղան, բերեց լցրեց գո-
մերն ու յելավ վերեվ: Ու հենց վոր տեսավ տղին,
մոնչաց յոթը բերնով:

— Ո՞վ ես, ասավ, ո՞վ հողածին: Հավքն իր թե-
վով, ոճն իր պորտով չի յեկել այստեղ, զու ի՞նչպես
համարձակվեցիր... Միթէ իմ անունը չե՞ս լսել զու...

— Լսել եմ, ասավ Արին, ու յեկել եմ քու դեմ
կոխվ:

Դեվը ծիծաղեց. — Հա՛-հա՛-հա՛:

— Կոխվ, ասավ. — Հիմի կողե՞ս, թե՞ առավոտ:

— Դու գիտես, ասավ Արին:

Դեվը թե՝ մեր մեջ աղաթ կա, վոր յեկվորին պա-
հենք, պատվենք, առավոտը կովենք:

— Լավ, ասավ Արին, առավոտը կովենք:

Ասին, խոսին, հաց կերան միասին ու պառկեցին
ջոկ սենյակներում քնելու:

Գիշերվա կիսին գեվը գարթնեց:

— Սա վոր, ասավ, իմ կարմիր յեղբորը հաղթել
ե, ինձ ել կարող ե վնասել. ել ինչո՞ւ յեմ առավոտը

թողնում. գնամ հենց հիմի ուստիմ՝ վերջացնեմ, յոթը
տարի յե մարդու միս չեմ կերել:

Ու վեր կացավ լընդլընդալով գնաց դեպի տղի
սենյակը:

Տունը նորից ժաժ յեկավ:

Տղան զարթնեց:

— Դեվը զալիս ե, ասավ:

Ասավ ու վեր թոսվ տեղից: Թուրը հանեց ու
կանդնեց պատի տակ:

Դեվը յեկավ ագահ բերնից թուք ու լորձունք թա-
փելով: Յեկավ ու մոնչալով ընկավ քնած հյուրի տեղի
վրա, վոր միանդամից կուլ տա նրան: Բայց վրա ընկ-
նելու հետ Արին թուրը տարավ բերեց ու դեվի յոթը
գլուխը մի անդամից ցած գլորեց:

Ու ցած գլորեց թե չե՝ լուսը — լուսը բացվի ձեր
վրա, — արեվի լուսը բացվեց սեվ աշխարհի վրա: Լու-
սից զարթնեց աղջիկ-փերին, յեկավ տեղից՝ տեսավ
դեվն ել չկա, ընկավ տղի վզով:

— Անհաղթ մնաս, ասավ, կտրիճ տղա: Դե, յես
քոնն եմ հիմա, դու իմը, արի պսակվենք:

— Չե, ասավ Արին, դու իմ միջնեկ յեղորը նշա-
նածը կլինես:

Ու նշան տվեց, նշան առավ: Հետո իջավ ներքեւ,
ինչքան գազան, անասուն ու թռչուն եր բերել դեվը,
բոլորին արձակեց — բաց թողեց գոմերից:

— Գնացեք, ասավ, նորից ձեր սարը, ձեր անտառը
ու ձեր բները:

Բոլորն ուրախությունից ծուլ յեղան, ճիչ ու կանչ
արձակեցին, պտավեցին տղի գլխով ե, ապա ամեն
մեկը գնաց ի՞ր սարը, ի՞ր անտառը ու ի՞ր բունը:

Յերեք որ Արին հյուր մնաց այստեղ, ու յերեք
որից հետո զբահ հագավ, գենքեր առավ, ձին հեծավ ու
ասավ աղջկան.

— Դե, մնաս բարով, վերի քույրիկ, յես գնացի:

— Ուր, հարցրեց աղջիկը վախեցած:

— Գնում եմ, քույրիկ, Հազարան Բլբուլը բերե-
լու:

— Վա՛յ, ասավ աղջիկը, մի՛ գնա. նրա ձամփան
շա՛տ ե զժար, անդառնալի: Հազարներ են զնացել,
մինչև այսոր յետ չեն դարձել: Դու ի՛նչ սրտով կամ
ի՛նչ զենքով ես գնում: Արի, խեղճ գլուխդ մի տար
մահու:

— Պետք ե գնամ, քույրիկ, ասավ, վճռված բան
ե: Պետք ե գնամ Հազարան Բլբուլը բերեմ, վոր մեր
այգին կանաչի:

Ասավ ու ձամփան ընկավ:

Ու գնաց նորից, գնաց Զոր-Զորստան, Անդ-Անտ-
պատ, ուր քարվան չի քոչում, ուր հավք չի թոչում...

168

5

Գնաց, գնաց, շատն ու քիչը ճամփան գիտի, գնաց
ընկավ մի աշխարհ: Ի՛նչ աշխարհ. ամբողջն ավեր, ա-
վերակ, ամբողջը մարդու վոսկորներով ծածկված:
Ամեն մի քայլն անելիս, ամեն վոսկոր գարհուրելի ձայն
եր տալիս.

— Ո՞ւր ես գնում, խենթ տղա:

— Ո՞ւր ես գնում, հիմար տղա:

— Մահն ե կանգնած քո առաջ:

— Դարձի՞ր, դարձի՞ր, փախիր չուտով:

Ու այսպես ահարկու կանչում եյին ամեն կողմից: Զին վախեցած ծառս եր լինում, կոծում եր սանձը յեր-
կաթե ու դողում բոլոր յերակներով, բայց Արին կանդ
չեր առնում, յետ չեր նայում:

— Գնա՛, գնա՛, իմ կազույտ, ասում եր նա ձիուն
ու ասպանդակում:





Զին նորից առաջ եր վազում, և վոսկորները կանչում եյին ելի:

— Ո՞ւր ես գնում, անխելք տղա:

— Վա՛յ քեզ, խենթ տղա:

— Կերադարձիր, հիմար տղա:

— Քառսուն գլխանի Սիպտակ դեզի հողն ե սա:

Աւ այսպես կանչում եյին շարունակ, բայց տղան չեր լուսմ նրանց, իր կապույտը քշում եր ու քշում:

Քշեց այսպես գնաց, դեմք յելավ մի սպիտակ

ամրոց: Ի՞նչ ամրոց, ի՞նչ ապարանք — ամրողջը մարդու սիստակ վոսկորներից ու գանդերից շինած:

Գնաց կանդնեց Արին ամրոցի գեմ:

Այստեղ ել մի աղջիկ յելավ նրա առաջ — վոսկի մաղերն արձակ, դեմքը գարնան վարդ, ամեն աչքը արեվի հատ:

Յեկավ աղջիկն ու՝

«Վայ քեզ, խեղճ տղա, ասավ, մի՞թե դու այնքան վոսկորը չտեսար: Գնաց յեկած ճամփաղ, փախիր շտառվ, քանի Սիպտակ դեզը չի զարթնել քնից»:

— Ա՛խ, փերի քույրեկ, ասավ Արին, դեռ մի պատիվդ չառած, հացիդ կտորը չկերած, դառը չիրուխդ չքաշած, ինձ վախեցնում ես Սիպտակ Դմով:

— Ի՞նչպես չվախենաս, — ասավ, — անահ տղա, տե՛ս ամրողջ յերկիրը ծածկվել ե նրա կերած մարդկանց վոսկորներով: Տե՛ս, պալատ ե շինել մարդկանց գանդերից:

— Բայց ինչո՞ւ յե քեզ թողել կենդանի, ասավ Արին աղջիկան:

— Ո՛, այ տղա, յես նրա գերին եմ, ասավ աղջիկը տրտում: — Նա ջնջեց, սրբեց մեր յերկիրը, կերավ ծնողներիս ու քույրերիս և ինձ բերեց իրեն գերի... Բայց զու զնա, խեղճ տղա, թե չե, հիմի վորտեղ վոր ե կզարթնի նա... քառսուն գլուխ ունի, քառսուն բերան:

— Ուր զնամ, ասավ Արին, յես հենց նրա համար եմ յեկել: Գնաց զարթեցրու թող գա կովենք:

Այստեղ վոսկորները լեզու առան նորից.

— Վա՛յ քեզ, տղա, վա՛յ քու որին, արեվին... Փախիր քանի շուտ ե, փախիր, քանի չի զարթնել...

Շատ կանչեցին այսպես, բայց Արին ելի չշարժվեց տեղից, դեռ մի քիչ ել տղաջ գնաց ու ներս մտավ: Գնաց տեսավ քառսուն ունկանի մի կաթսա, քառսուն լիդը բրինձ մեջը. փլավ են յեկել, քառսուն հավ ել վրան գրել: Յերեք որ Արին հաց չեր կերել. փլավը

տեսավ բերանի ջուրը գնաց: Առավ կերավ ինչքան կարաց, բերանը սրբեց ու մի կողմ նստեց:

Դեվը զարթնեց, յեկավ ներքեւ:

— Մարդու հոտ եմ առնում, ասամ կնկան, ո՞վ կա այստեղ:

Մինչ վախեցած կինը կատասխաներ, Արին կողքի սենյակից դուրս յեկավ:

— Յես եմ, — ասամ:

— Ո՞վ ես դու, — զարմացավ դեվը, — հավքն իր թեղով, ոճն իր պորտով չի գալիս այստեղ, դու ի՞նչպես համարձակվեցիր...

— Յեկել եմ, ասամ Արին, քու դեմ կռիվ:

Դեվը հասկացավ, վոր դա իր յերկիրը գալուց առաջ սպանել եր իր կարմիր ու Սեվ յեղբայրներին և հիմա յեկել ե իր մոտ:

— Լավ, ասամ, կռիվ կռողես՝ կռիվ անենք: Արի գեռ մի հաց ուտենք, հետո կռվենք:

Նստեցին հացի: Արին կռւշտ եր, բան չկերավ, իսկ դեվը քառսուն լիդր բբնձով փլավը առաջը դրեց, ամեն լիդրը մի բերանը կռիւեց մի հավի հետ ու վեր կացավ: Վեր կացավ ու ձեռն առավ իր դուրզը, վոր քառսուն լիդր եր կըուում:

— Դե, գնա՞նք, ասամ:

Արին ել առավ իր թուրը, յեկավ նստեց իր կապույտին, ու դուրս յեկան հրապարակ:

Նորից գետնի տակից ու յերեսից զարհուրելի ձայներ.

— Վա՛յ քեզ, իսեղճ տղա:

— Վա՛յ քու որին, արեվին:

Եսոսողն ելի վոսկորներն եյին:

— Հերթը հիմի ի՞մն ե, թե քունը, ասամ դեվը:

— Քոնն ե, ասամ Արին, — յես քո հյուրն եմ:

Դեվը գնաց քառասուն-քառասուն քայլ հեռու:

— Դե, պատրաստ կաց, ասամ, դուրզը յեկավ:

Ու դուրզը զցեց մի ահագին ժայռի նման:

Արին վորքան ուժ ուներ մտրակեց ձիուն: Զին թուավ վերեվ, զուրզը անցավ նրանց տակից:

Դեվը մին ել գնաց, մին ել յեկավ: Ես անգամ ել ձին թուավ վերեվ:

Դեվը կատաղեց ու գնաց ավելի հեռու, ու յերկուրորդ անգամ դուրզը զցեց:

Այս անգամ ել Արին վորքան ուժ ուներ մտրակեց ձիուն:

Կապույտը նորից տիրոջ հետ թուավ վերեվ, և դուրզը նորից անցավ նրանց տակից:

— Դե, հերթը իմն ե, ասամ Արին, կանգնիր հիմա:

Դեվը կատաղությունից չեր կարողանուի ուղիղ կանգնել: Յերկար մոնչաց, տնքաց, քառսուն բերնից ծուխ ու մուխ արձակեց և, ապա կանգնեց Մասիս սարի պես սիպտակ, Մասիս սարի պես մեծ, ահագին:

Գնաց Արին մի քիչ հեռու ու ձին քշեց թուրը հանած: Յեկավ թափով զարկեց ու դեվի յերեսուն իննը գլուխը միանգամից ցած բերեց: Զանցավ մի ըոսկե, այդ գլուխները դուրս յեկան նորից: Զարմացավ տղան ու թուրը քաշեց կրկին: Ու նորից յերեսուն իննը գլուխը կտրեց միանգամից: Բայց դեվը կենդանի յեր դեռ և գլուխները զարձյալ դուրս յեկան:

— Այս ի՞նչ բան ե, — զարմացավ Արին, — մի՞թե անմեռ ե սա:

Այստեղ աղջիկը կանչեց ամրոցից.

— Մի վախիր, Արի, մեջտեղի գլուխն զարկիր, ու վորքան ել դեվը խնդրի՝ չկրկնես յերկորդ անգամ:

Ասամ թե չե, թուրը քաշեց յերկորդ անգամ ու մի զարկով մեջտեղի գլուխը թոցրեց:

— Զարկիր մեկ ել, մեկ ել, կանչեց դեվը զալարվելով:

— Յես իմ մորից մեկ եմ ծնվել, ասաց Արին ու, թուրը սրբելով, գնաց պալատ:

Աղջիկն այստեղ փաթաթվեց տղի վզով, համբու-
րեց նրան ու չորհակալ յեղավ:

— Դե հիմի, ասավ, յես քունն եմ, դու իմը:

Յերեք որ Արին մնաց այդտեղ, հանդստացավ,
քեֆ արավ:

Մի որ ել քեֆի ժամտնակ «ախ» քաշեց ու վեր կա-
ցավ:

— Յես գնում եմ, — ասավ:

— Ո՞ւր, հարցրեց կինը զարմացած:

— Բա, ասավ, մեր այդին այնտեղ մնացել և չոր,
յես յեկել այստեղ քեֆ եմ անում: Պետք ե դնամ:

— Ո՞ւր, հարցրեց կինը:

— Հազարան Բլրուլը բերելու:

— Վայ, ասավ, հողն իմ գլխին: Այնտեղ գնացողը
յետ չի գալիս:

— Զե, ասավ, ինչ ել լինի — պետք ե դնամ: Յես
ուխտ ունիմ, պետք ե կատարիմ: Պետք ե Հազարան
Բլրուլը բերեմ, վոր մեր այդին կանաչի...

Կինը տեսավ, վոր մարդու վորոշումը հաստատ ե,
նրան պահել չի կարող, նստեց խորհուրդ տվեց, թե
վոնց պետք ե բերել Հազարան Բլրուլը:

Ու Արին ճամփա ընկավ դեպի Սիստակ թաղավո-
րի յերկիրը:

6

Գնաց, գնաց, շատն ու քիշը ինքը գիտի ու իր
ձին, գնաց հասավ Սիստակ յերկրի սահմանը: Հասավ
թե չե, յերկու սիստակ շուն, շուն մի ասիլ, յերկու
կատաղած գաղան, յեկան մեր ձիստորին վրա պրծան:
Քցեց Արին ամենքին մի դաթա. դրանք զաթով յեղան,
ինքը գնաց իր ճամփան: Գնաց հասավ Սիստակ թա-
գավորի ամբողը: Ինչ ամբոց, ինչ ամտաթ — գնա,

գնա, թե պիտի վերջանա. Հազար մուտք ուներ, հա-
զար անցք: Գնաց մտավ Արին ներս ու, ինչպես կինն
եր ասել, բոլոր փակ զռները բաց արավ, բաց զռները
փակեց: Հետո տեսավ մի սենյակում գայլ՝ խոտն ա-
ռաջին և մի զոչ՝ միան առաջին: Յերկուսն ել սովոր
մաշվել վոսկոր եյին կտրել: Միուր վերցրեց Արին գայ-
ժի առաջը դրեց, խոտը՝ զոչի:

Մի քիչ գնաց — անքոց, հառաջանք ու լաց լսեց:
Մոտեցավ, — հազար ձայներով, հազար ձեվերով մար-
դիկ եյին լալիս փակ զռների յետեւ այնպես տիսուր ու
զարհուր, վոր Արին ել չհամբերեց, վոտով զարկեց,
փակ գուռը պոկեց: Դուրս թափվեցին կմախք գարձած
անթիվ, անթիվ գերիներ: Դուրս թափվեցին ուրախու-
թյան ճիշերով, որհնանքներով: Դուրս թափվեցին ու
ցրվեցին:

Գնաց քիչ ել մեր Արին հանդիպեց Սպիտակ
թագավորին: Փղոսկրից ու վոսկուց շինած մեծ սարտ-
յում պատկել եր նա յերկար ու մեկ և խոմփում եր
զարհուրելի. շունչը դուրս եր գալիս ծխի պես ու նրա
շնչից գողղողում եր ամեն ինչ:

Գնաց Արին ու կանգնեց նրա գլխավերն: Նայեց,
նայեց, ուղեց զարկել... Բայց տմարդը միայն քնած
մարդուն կզարկի:

— Թող քնի իր համար, ասավ ու ինքը կուցակ
բանալին հանեց նրա միրքի միջից:

Հանեց ու գնաց: Գնաց վերջին սենյակի գուռը րաց
արավ: Դուռը բաց արտվ ու ի՞նչ տեսավ — մի թրո-
շուն՝ փետուրները հազար գույնի, թեփերը զառ-ար-
բեշում. ցոլք են տալիս ազամանգի ու զմբուխտի փայ-
լով. և այդ ցոլքերից ու գույներից ծխածաներ են
վառվում սենյակում: Դա ինքը Հազարան Բլրուն եր,
վոր կար: Ուրախությունից Արին տարվեց նրա տես-
քով, փայլով, բայց ուշքի յեկավ շուտով և խոկոյն
բլրուն առավ իր վանդակով ու դուրս:

Ու վոտք սենյակից դուրս դրեց թե չե՛ ոդը լցվեց
ձայներով.

- Տարա՛ն, տարա՛ն բլրուլը:
- Տարան մեր Հաղպարան Բլրուլը:
- Բռնեցե՛ք, բռնեցե՛ք:
- Բաց գոներ, բռնեցե՛ք:
- Ինչո՞ւ յենք բռնում, ինչո՞ւ յենք բռնում, —
պատասխանեցին բաց գոները. — մեռանք փակած մնա-
լով, հազիվ մեղ բաց արավ: Թո՛ղ գնա, արեվը պայ-
ծառ:
- Փակ գոներ, բռնեցե՛ք:
- Չե՛նք բռնի, չե՛նք բռնի, — պատասխանեցին
փակ գոները. — մեռանք կրնկի վրա կանգնած, հազիվ
զրեց մեղ մեր տեղը: Թո՛ղ գնա, կյանքն ուրախ:
- Գերիներ, բռնեցե՛ք, բռնեցե՛ք:
- Չե՛նք բռնի, չե՛նք բռնի, մեր ազատողին չենք
բռնի, — ասին գերիները միասին. — Թո՛ղ գնա, ճամ-
փան ծաղիկ ու մանուշակ:
- Գել, բռնի՛ր, բռնի՛ր:
- Ինչո՞ւ եմ բռնում, ասավ գելը, — մեռա սոված
մնալով, հազիվ յեկավ միսը զրեց առաջս: Թո՛ղ գնա,
թեթև լինի իր ճամփան:
- Ղոչ, բռնի՛ր, բռնի՛ր:
- Ինչո՞ւ յեմ բռնում, ասավ զոչը, — մեռա սոված
մնալով, հազիվ յեկավ խոտը զրեց առաջս: Թո՛ղ գնա,
յերկար արեվ:
- Բռնեցե՛ք, բռնեցե՛ք, կանչում եյին ձայները
նորից:
- Բայց վոչով չեկավ բռնելու:
- Դուրս յեկավ Արին ամրոցից, հեծավ իր ձին ու
գնաց:
- Նրա յետեղից հաղար ձայներ ճշում եյին ու կան-
չում ելի, բայց Արին, կնոջ իրատը հիշելով, բուրդ
խրեց ականջները ու գնաց և մինչև սահմանը յետ չնա-
յեց յերբեք:

7

Բլրուլն առած գնաց Արին, գնաց հասավ կնոջ
ժուռ: Ուրախանաք, ինչպես նրա կինն ուրախացավ:
Փաթաթվեց մարդուն, համբուրեց, տխուր սիրար բաց
յեղավ, վոր մարդը վերադարձել եր փորձանքներից ա-
զատ: Նա Ե՛լ ավելի ուրախացավ, յերբ տեսավ մարդը
հասել ե իր նպատակին՝ բերել ե Բլրուլը Հաղպարան:

— Դե, Բլրուլ ջան, ասավ Արին, — մի խոսիր այս
չոր սարերը կանաչեն:

Բլրուլը բերանը բաց արավ թե չե Սիպտակ դեվի
չոր, ավերակ աշխարհը կանաչեց ու կանաչների միջից
նրա կերած մարդկանց վոսկորները ձայն ավին.

— Որչնյալ լինես, կտրիճ տղա. մենք հանգիստ
ենք հիմա:

— Դե, ասավ Արին կնկան, — պատրաստիր գը-
նանք: Մեր չոր այգին սպասում ե այս Բլրուլին Հա-
ղպարան:

Յեկ մարդ ու կին վեր կացան, դեվի թանկառին
բաները հավաքեցին, ուզտերին բարձեցին, իրենք ել
ձիեր նստեցին ու — զրը՛նդ հա զրը՛նդ, զրը՛նդ հա
զրը՛նդ — ճամփիտ բնկան գեպի Սեկ Դեվի հողը:

Սյունեղ ել բլրուլը խոսեց, Սեկ Դեվի ավերակ աշ-
խարհը կանաչեց, իսկ իրենք միջնեկ յեղբար հարսին
վերցրին, գեվի թանկադին բաները նոր ուզտերի բար-
ձեցին ու նորից — զրը՛նդ հա զրը՛նդ, զրը՛նդ հա
զրը՛նդ — գնացին հասան կարմիր Դեվի հողը:

Սյունեղ ել վերցրին մեծ յեղբոր հարսին, վերցրին
գեվի թանկադին բաները և նորից ճամփա ընկան:

Գնացին, գնացին հասան այն տեղը, ուր յեղբայր-
ները բաժանվել եյին իրարից:

Յերեք համփի մեջտեղը նստած եր ելի առաջվա
ծերունին:

- Բարի աջողում, պապի, ասավ Արին:
- Բարով, հաղպար բարի, կտրիճ տղա, — ճանաչեց
ծերունին նրան:

— Պապի, յեղբայրներս չե՞ն անցել այս կողմից, —
Հարցը Արին:

— Զե, ասավ ծերունին, — այստեղից դեռ մարդ
չի անցել:

— Դե վոր այդպես ե, ասավ Արին, այս հարսներին
մտիկ արա, յես գնամ յեղբայրներիս յետեից:

— Շատ լավ, ասավ ծերունին, իմ գործն ե մտիկ
անել...

Յեվ Արին մնաս բարով արավ բոլորին ու ճամփու
ընկավ:

Գնաց, շատ քաղաքներ ման յեկավ՝ յեղբայրներին
չգտավ: Վերջը հասավ Խորասան: Գնաց մեկի տուն
հյուր ընկավ:

— Զեր քաղաքում զարիբ մարդուն վո՞նց են գըտ-
նում, — Հարցը եց:

— Դա հեշտ բան ե, ասավ տանտերը, — մենք զա-
րիբների ժամ ունենք: Յեթե զարիբ ունես, առավոտը
կերթաս մի յերկու յեղ կմորթես-կեփես, հետո ժամի
զանդերը կքաշես: Քաղաքում ինչքան զարիբ-պան-
դուխտ կա կիմանան վոր իրանց ժամում պատարադ ե,
մատաղ կա, կթափվեն կգան: Թե քու զարիբներին
դանես, — ասավ տանտերը, — այնտեղ կգանես:

Մյուս որը Արին գիշերով գնաց յոթը յեզն ասավ,
մորթել տվեց, յեփել տվեց ու առավոտը վաղ ժամի
զանդերը քաշեց:

Զանդերի ձայնը լսելուն պես ինչքա՞ն զարիբ կար
Խորասան՝ հավաքվեցին յեկան ժամ: Արին իրա ձեռքից
մատաղ բաժանեց: Յեկան անցան Հարյուր հաղար զա-
րիբ — յեղբայրները չկային: Վերջը՝ մատաղը հատնե-
լու վրա եր — միջնեկ յեղբայրը յերեվաց: Տեսավ,
կանչեց իրա մոտ, մատաղ տվեց, գինի տվեց ու Հարց-
ըեց:

— Ճանաչո՞ւմ ես ով եմ յես:

— Զե, ասավ, ի՞նչ իմտնամ դու ով ես:



— Իսկ դու վո՞րտեղ ես ծառայում, Հարցը Արին
յեղբորը:

— Յես, ասավ, բաղնիսում: մոխիր թափող եմ
այնտեղ:

Արին վերցը սրան ու յեկավ բաղնիսի տիրոջ
մոտ:

— Սրա վարձը տուր, ասավ, յես սրան տանում
եմ:

— Սա քո ի՞նչն ե, վոր սրան տանում ես, — Հարց-
բեց բաղնիսի տերը:

— Իմ յեղբայրն ե, ասավ Արին:

— Դու ո՞վ ես, վոր իմ յեղբայրն ես, Հարցըց
միջնեկը՝ Զարին:

— Յես Արին եմ, ասավ:

Զարին Հավատաց:

— Թե իմ յեղբայրն ես, ասավ, — դե ասա տեսնեմ
մենք ինչո՞ւ համար ենք դուքս յեկել մեր յերկրից:

— Հազարան Բլրուլի համար, ասավ Արին. — Ար-
դեն բերել եմ:

— Ուր ե հապա, Հարցըց Զարին:

Արին թե՝ մեր բաժանման տեղումն ե, ծերունու
մու:

Այստեղ յեղբայրները ճանաչեցին իրար: Բարե-
տվին, բարե առան, ինչպես կարգն ե:

Արին Զարու հին շորերը հանել տվեց, դեն ածավ,
նոր շորեր հազցըց ու ճամփա ընկան:

Գնացին այսպես մեծ յեղբորն ել գտան ու յերե-
քով, ձիեր հեծած, յեկան հասան յերեք ճամփի գլու-
խը: Յեկան տեսան Հարսներն այստեղ:

Արին յեղբայրներին ցույց տվեց Հազարան Բլրուլը
և հետո ամեն մեկին իր նշանածը տվեց:

Բայց մեծ յեղբայրը՝ Խարին, դժգոհ մնաց:

«Տես, — ասավ ինքն իրեն, — ամենից դեղեցիկն
ինքն ե վերցնում, մեզ ինչ ե տալիս»:

Մի քիչ հանգստացան այստեղ, հաց կերան, հետո
վեր կացան, ծերունուն չնորհակալություն արին, նոր
քարվան կապեցին ու — զրբ'նդ հա զրբ'նդ, զրբ'նդ հա
զրբ'նդ — ճամփա ընկան դեպի իրենց յերկիրը:

8

Այս աշխարհում ի՞նչն ե հաստատ, ի՞նչն ե ու-
ժեղ... Սեր, ընկեր, յեղբայր — վո՞րն ե հաստատ:
իմաստուն ել լինես, չես կարող պատասխանել: Հաս-
տատն այն ե, վոր այս աշխարհում վոչինչ չկա հաս-
տատ: Զա՞րն ե ուժեղ, թե՞ բարին — իմաստուն ել
լինես, չես կարող պատասխանել:

Այսպես շարքով քարվան կապած գնացին յեղ-
բայրները: Գնացին հասան մի ծովի: Պարզ ջրերը փոք-
րուր կապած զարկվում են ափերին: Զարկվում են ու
խշխում: Խշխում են ու հանդարտ-հանդարտ յետ
գնում:

Չուրալ ջրեր, հոգնած մարդիկ ու չող որ:

— Յեկեք լողանանք, ասավ մեծ յեղբայրը:

— Լողանանք, ասին Զարին ու Արին:

— Թող հարսները առաջ գնան, ասավ մեծ յեղ-
բայրը, — մենք լողանանք, հետո կհանենք նրանց:

Հարսները Բլրուլն առած, քարվանի հետ առաջ
գնացին. յեղբայրները հանվեցին ու մտան ջուրը:

Ծովի ջուրը փրփուր կապած հանդարտ-հանդարտ
զարկվում եր ափերին և յեղբայրները շրի-շրի լողա-
նում եյին միասին: Մին ել մեծ յեղբայրը միջնեկին.

— Լսիր, ասավ, — արի սրան խեղդենք, բլրուլը
մենք տանենք:

— Զե, ասավ Զարին, — ինչ ել լինի մեր յեղբայրն
ե, մեղք ե: Լավ ե ձեռն ու վոտը կապենք, աչքերը
հանենք, թող մնա:

— Այդ լավ ասիր, ասավ մեծ յեղբայրը Խարին:

Ու ջրից դուրս յեկան թե չե, յերկուսով բռնեցին
յեղբորը, ծեռներն ու վոտները կապեցին, դրին գետին,
աչքերը հանեցին, թողին այդտեղ ծովի ափին, շորերը
ծովն ածին ու իրանք գնացին: Գնացին հասան քարվա-
նին:

Հարսները տեսան յերկուսով են, Հարցըին.

— Բա Արին ո՞ւր մնաց :

— Արին... ասավ մեծ յեղբայրը տխուր.— Յերանի՛ չողանայինք. աստանի վոտը կոտրեր ջուրը չմտնելինք... Արին խեղդվեց ծովում :

— Ինչ ել արինք հանել չկարացինք, ասավ միջնեկը տրտում :

Հարսնելն այստեղ «վա՛յ» տվին գլուխներին ու լաց յեղան : Ու ամենից ավելի իրա Արին կինը :

Վերջը յերբ յեղբայրները մխիթարեցին նրանց, հանգստացան, կանգնած քարվանը նորից — զրբ'նդ հա պը՛նդ — շարունակեց ճամփան :

9

Նրանք գեռ ճանապարհի կիսին եյին՝ լուրը հասավ թագավորին, թե վորդիներդ դալիս են ու բերում են Բլրուլը Հազարան :

Թագավորը, ինչպես կարգն ե, իր մեծամեծներով, զինավառ զորքով ու մեծ ժողովրդով գնաց առաջ :

Յերկու կողմից զրընդոցով, շմկչիսկոցով յեկան հանդիպեցին իրար : Պատիվ տվին, պատիվ առան ու հանդեսով, յերգով, կանչով մտան քաղաք :

Քաղաքումն ել մարդ չմնաց, հարյուր տարվա ծերերն ել վոտքի յեւան Հազարան Բլրուլը տեսնելու : Կտուր, վողոց լցվեց մարդով, և բոլորը ծափ զարկեցին ու կանչեցին .

— Կեցցե՛ քաջն Խարին :

— Կեցցե՛ քաջն Զարին :

— Կեցցե՛ Բլրուլը Հազարան :

Այսպես յերգով, կանչով զորք ու ժողովուրդ, ինչպես վարար մի գետ, գնացին տաճար : Բլրուլն իր վանդակով գրին սեղանին :

Այստեղ միայն թագավորը հարցրեց վորդիներին, թե հապա ո՞ւր ե Արին :

— Նա ծովում խեղդվեց, հայրիկ, ասին յեղբայրները տխուր :

— Իսկ այս յերեք աղջիկն ո՞վ են, հարցրեց թագավորը նորից :

— Այս մեկը, պատասխանեց մեծ յեղբայրը՝ Խարին, — իմ նշանածն ե, այն մյուսը՝ միջնեկ յեղբորս, իսկ սա յել, ցույց տվեց Արին կնկան, աղախին ե քեզ Համար...

— Մո՛ւտ ե, ասավ փոքր հարսը թագավորին :

Թագավորն այստեղ մատը կծեց :

— Իսկ Հազարան Բլրուլը ձեզանից վո՞րը գտավ :

— Յե՛ս, ասավ մեծը :

Վրա բերեց միջնեկը :

Թագավորը նորից մատը կծեց :

— Ինչպես տեսնում իմ, ասավ, ձեր մեջ վեճ կա:

Դե միևնույն ե, ասավ, ով բերել ե, թող նա յել իսուցնի Բլրուլը :

— Յե՛ս, առաջ յեկավ մեծը՝ Խարին :

— Դե խոսեցրու, — ասավ թագավորը, — խոսեցրու, թող յոթը տարվան մեր չոր այդին կանաչի :

Խարին բարձրացավ սեղան :

Չորք ու ժողովուրդ այստեղ իրար անցան, ծափ զարկեցին ու կանչեցին .

— Կեցցե՛ Խարին, կեցցե՛ Խարին...

— Կեցցե՛ Բլրուլը Հազարան...

Խարին մոտեցավ բլրուլին, գլուխ տվեց, ինչպես կարգն ե, ու ասավ :

— Բլրուլ, խոսիր, թող մեր այդին կանաչի :

Բլրուլը գլուխը թափ տվեց տխուր ու ձայն չհանեց :

Առաջ յեկավ միջնեկ վորդին :

— Տեսա՛ր, հայրիկ, ասավ, տեսա՛ր, վոր յես եք բերել :

— Դե խոսեցրու, ասավ հայրը, խոսեցրու թող յու-
 թը տարվան մեր չոր այգին կանաչի:
 Յեվ Զարին բարձրացավ սեղան:
 Չորք ու ժողովուրդ ելի իրար անցան, ծափ զար-
 կեցին ու կանչեցին.
 — Կեցցե՛ Զարին, կեցցե՛ Զարին:
 — Կեցցե Բլրուլը Հազարան:
 Զարին մոտեցավ բլրուլին, գլուխ ավեց, ինչպես
 կանգն ե, ու ասավ:
 — Բլրուլ, խոսիր, թող մեր այգին կանաչի:
 Բլրուլն ելի տիսուր թափ տվեց գլուխը ու ձայն
 չհանեց:
 Ծափ ու ծիծաղ ընդհատվեց:
 Բոլորն ընկան մտքերի մեջ:
 Այդին չոր եր, չոր ել մնաց:
 Իսկ բլրուլը հալվում, մաշվում եր վանդակում,
 և նրա զմբուխտ ու լալ փետուրները թափվում եյին
 որեցոր...
 Սրանք թող մնան այստեղ, մենք լուր տանք փոքր
 յիղբորից:

10

Այն ծովը, ուր յեղբայրները լողացան, ուր պարզ
 Արերը փրփուր կապած զարկվում եյին ափերին, այն
 ծովի վրայով ճերմակ հավքերի մի յերամ եր անցնում:
 Մի պառավ մայր եր իր ձագերի հետ: Շարան կապած,
 ծովի յերեսն ընկած գնում եյին նրանք հեռու: Գնում
 եյին, թեվին անում ու կղղում:
 Գնացին այսպիս հեռո՛ւ, հեռո՛ւ, ու յերբ հասան
 ժայը ծովի՝ ձագերը ճշացին հանկարծ:
 — Վա՛յ, մայրիկ, ասին, այս ո՞վ ե ընկած ոյս-

Պառավ մայրը, վոր շատ յերկիրներ եր տեսելու
 շատ մարդ եր ճանաչում,
 — Թագավորի փոքր տղան ե, ասավ:
 — Բա ինչո՞ւ յե այստեղ ընկել-մնացել:
 Պառավ մայրը, վոր իմաստուն եր և պմեն ինչ դի-
 տեր,
 — Յեղբայրները, ասավ, — դրա ձեռն ու վոտը
 կտպել են, աչքերը հանել ու թողել:
 — Վայ խեղճ տղղա՛, խեղճ տղղա՛, — կղղացին
 ձագերը միասին. — Բա վո՞նց պիտի սա լավանա...
 — Դա հեշտ բան ե, ասավ մայրը, — յես իմ թե-
 փից մի փետուր կքցեմ, աչքերն ել իր կողքին են, թող
 տեղը գնի ու փետուրը քսի աչքերին:
 — Իսկ թոկերը վո՞նց անի, մայրիկ:
 — Այն ել գուշ գնացեք կտցով պոկեցեք:
 Զագերը կողճացին տղին, ցած իջան և կտցներով
 սկսեցին քանդել-պոկել նրա ձեռներն ու վոտները կաչ-
 կանգող թոկերը:
 Յերբ ձեռներն ազատվեցին կապից-կապանքից,
 Արին ձեռը տարավ աչքերը զտավ, տեղը դրեց ու
 թոշունի փետուրը քսեց: Ինչպես քնից զարթնես՝ աչ-
 քերը բաց արավ ու լույս աշխարհը տեսավ: Վեր կա-
 ցավ, ուզեց թոշուններին չնորհակալություն հայտնել,
 բայց նրանք ճերմակ յերամ կապած, ծովի փրփուր
 լանջով գնում եյին նորից...

Ու այստեղից վեր կացավ Արին և մերկ ու մենակ
 գնաց իր հոր քաղաքը: Վորովհետեւ տկլոր եր, ամոթից
 չուզեց գնալ պալատ:

«Լավ ե, ասավ, ծառա մանեմ մի տեղ, վրաս գըլ-
 խիս չոր անեմ, նոր գնամ»:

Ու գնաց մի հացթուխի մոտ:

— Բարի: աջողում, վարպետ, ասավ, ծառա չե՞ք
 վերցնի:

— Ինչու չե, ասավ, ինձ հենց ջուր կրող ու վայս
 Հարդար ե հարկավոր:

Ու խոսեցին, պայման կապեցին, և Արին յեղագլացթուխի ծառա: Չուր եր բերում, փայտ եր ջարդում, փուռ եր վառում և հացդուփոր ապրում:

Անցավ այսպես մի ամիս: Մի որ ել հանկարծ քաղաքի մարդիկ իրար գլխով դիման և քաղաքը լցվեց ճիչ ու լացով: Մարդիկ փախչում, պահպում ելին ամեն կողմ:

— Այս ի՞նչ բան ե, վարպետ, ասավ Արին:

— Այ վա՛յ գլխիդ, — ասավ տերը, — ուղտի ականչումը քնած ես, ինչ ե, վոր չես լսել: Սիպտակ թագավորը հրե, իր բոլոր դեվերին հավաքել յեկել և մեր քաղաքը պատել:

— Ինչո՞ւ համար, ասավ, վարպետ:

— Ինչո՞ւ համար... քու գնչի համար, հիմար... թագավորի տղեքը գնացել են նրա Հազարան Բլրուլը բերել, նա ել յեկել հիմա րլրուլ բերողին և ուզում:

— Հա՞... դե վոր այդպես ե, վարպետ, ասավ, — արի գնա թագավորի լով ճիերից մինր խրնդի, գնամ պատասխան տամ...

Վարպետը ծիծագեց:

— Այ վա՛յ գլխիդ, — ասավ, — Սիպտակ թագավորին պատասխան տվողիս տեսեք: Պատասխան՝ թագավորի տղեքը կարո՞ղ են նրան պատասխան տալ. դու ո՞վ ես վոր, տկլոր հիմար:

Ասավ վարպետն ու դուրս գնաց: Նրա հետեւից ել Արին:

Գնաց տեսավ թագավորի մեծ տղան, իր մեծ յեղբայրը՝ Խարին, ճի նստած գնում եղելին պատասխան տալու:

— Այդ ո՞ւր, թագավորի տղա, ասավ Արին:

— Հեռո՞ւ, ասավ, տկլոր հիմար. չես տեսնում Սիպտակ թագավորն յեկել՝ Հազարան Բլրուլ բերողին և ուղում...

Ասավ, մտրակով զարկեց Արուն ու ճին քշեց-գնաց:

Գնաց քաղաքից դուրս յեկավ: Դուրս յեկավ ու ի՞նչ տեսավ: Ամբողջ գաշտը ճեղմակել ե Սիպտակ թագավորի սիպտակ վրաններից սիպտակ զորքերից ու սիպտակ ճիերից: Ու ամեն կողմ աղմուկ դեվերի քրքիջ, ճիերի խրխինջ:

Այդ վոր տեսավ ահ կալավ սիրտը, թեքեց իսկույն ճիու գլուխը ու նորից յետ յեկավ քաղաք, ճին թողեց վոր գնա պալատ, իսկ ինքը պահվեց անհայտ մի տեղ:

— Վա՛յ, կորավ մեր Խարին, — ասավ թագավորը, տեսնելով նրա անտեր ճին: — Դե, Զարի, հերթը քոնն ե հիմի Սիպտակ թագավորին պատասխան տայու: Դու յես բերել Բլրուլը Հազարան, դու յել կարող ես պատասխան տալ նրան...

Զարին իսկույն զրահ հագավ, զենքեր առավ ու ճի հեծավ:

Ճամփին Արին մոտեցավ ելի:

— Այդ ո՞ւր, թագավորի տղա, — ասավ:

— Հեռո՞ւ, հիմար անասուն: Զե՞ս իմացել, վոր Սիպտակ թագավորը Հազարան Բլրուլ բերողին և ուզում: Գնում եմ պատասխան տամ: Հեռո՞ւ...

Ասավ, քաշեց մտրակը նրա թիկունքովը մեկ ու ճին քշեց-գնաց:

Գնաց գաշտը դուրս յեկավ, դուրս յեկավ ու ի՞նչ տեսավ: — Ամբողջ գաշտը ճեղմակել ե ճյունի պես Սիպտակ թագավորի սիպտակ վրաններից, սիպտակ զորքերից ու սիպտակ ճիերից: Ու ամեն կողմ խոսոց ու աղմուկ դեվերի քրքիջ, ճիերի խրխինջ:

Ահից-յերկյուղից կալ ընկավ լեզուն, ճիու գլուխը թեքեց իսկույն ու նորից յետ յեկավ քաղաք. ճին թողեց գնա պալատ, իսկ ինքն ամօթից պահվեց մի տեղ:

Մինչ այդ Սիպտակ թագավորն սպասեց տեսավ

մարդ չի յերկում, նորից ուղարկեց մի նոր հրաման.

«Վերջին անգամ ու կտրական պահանջում եմ մի ժամվա մեջ տալ ինձ իմ բլրուլը բերողին։ Հակառակին՝ շունչ չեմ թողնի այս յերկում, քար չեմ թողնի քարի վրա»։

Սուր ու շիվանն ընկավ քաղաք։ Նորից վախ ու փախ։ Նորից փախուստ ու պահուստ։

— Վա՛յ, մենք կորանք։

— Վա՛յ, մենք մեռանք։

— Թո՛ղ չքանար այդ բլրուլը։

— Զքվեր, կորչեր այդ բլրուլը։

Այդ ժամանակ Արին փոխ համար փայտ եր չարգում, ու ջարդի ձայնից բան չեր լսում, բայց մեկ եւ տեսավ վարպետը յեկավ վազեվազ և ուզում և փուռք մտնի։ Արին այստեղ ծիծաղեց։

— Ի՞նչ ես անում, վարպետ, ասավ։

— Զայնդ կտրի, շաշ մասիսարա, ասավ վարպետն ահարեկ, — Սիպտակ թագավորը գալու յե հիմի, քարը քարին չպիտի թողնի։ Դու այստեղ նատել փայտ ես ջարդում։

— Սիպտակ թագավորը . . . Բա թագավորի տղերքը պատասխան չտվի՞ն։

— Ի՞նչ պատասխան, ի՞նչ բան, հիմար, դմեռ ճարը տես, հիմա . . .

— Այդ չեղավ, վարպետ, ասավ Արին. — Արի գնա թագավորին ասա մի ձի տա — գնամ պատասխան տամ։

— Գնա՛, կորի, հիմա՛ր, — ասավ վարպետը փոխ միջից, — թագավորի տղեքը չկարացին բան առել, դու պիտի պատասխան տաս։

Այդ ժամանակ սուր ու շիվանը քաղաքում եւ ավելի մեծացավ։ Մարդիկ իրար արորելով վախչում եյին և անիծում Հազարան բլրուլին եւ, նրա բերողին եւ։

Այդ վոր լսեց Արին, եւ չհամբերեց, մերկ ու տկըոր գնաց ուղիղ թագավորի մոտ։

Գնաց գլուխ տվեց, ինչպես կարդն է, ու կանգնեց։

— Թագավորն ապրած կենա, ասավ, հրամանք արեք ինձ մի ձի տան — գնամ Սիպտակ թագավորին պատասխան տամ։

Սեր թագավորը չճւնաչեց իր տղին։

— Դե, վորդի, ասավ, յես հույս չունեմ, թե մի բան անես, բայց գնա գոմը, վոր ձին կուզես ընտրէ ու, թե կարաս Սիպտակ թագավորին պատասխան տուր։

— Բայց, թագավորն ապրած կենա, ասավ Արին, յես մի պայման եմ դնում։

— Ասա՛։

— Յեթե յես, ասավ Արին, Սիպտակ թագավորին պատասխան տվի ու նա թողեց գնաց առանց մեր քաղաք վնասելու, յերեք նր թագավորությունդ ինձ տուր, վոր ի՞նչ ուզեմ անեմ, վոր ի՞նչ դատեմ, դատեմ։

Թագավորն ստորագրություն տվեց, Արին պայմանն առավ ծոցը գրեց, նետ ու աղեղը վերցրեց, ձին հեծավ ու գնաց։

Գնաց ուղիղ Սիպտակ թագավորի մոտ։

Գնաց տեսավ նրա բանակում մեծ կեր ու խոսք գելերի քրքիչ, ձիերի խրխինջ։

— Ո՞ւր ե թագավորն, ասավ։

— Հրե՛ իրա սիպտակ վրանում։

Քչեց գնաց սիպտակ վրան։ Ներս մտավ ու, առանց դլուխ տալու, կանգնեց Սիպտակ թագավորի առաջ։

Սիպտակ թագավորը բարկացավ այստեղ։

— Ինչո՞ւ, ասավ, ինձ գլուխ չես խոնարհում։

— Ես գլուխ խոնարհել չդիտեմ, ասավ Արին։

— Դե, լավ, ասավ զայրացած։ — Դո՞ւ յես թագավորի վոքը տղան։

— Յե՛ս եմ:

— Դո՞ւ յես բերել իմ ԲԱՐՈՒԼՐ Հաղարան:

— Յես եմ բերել:

— Պատմիր տեսնեմ ի՞նչպես բերիր:

Արին պատմեց՝ այսպես, այսպէս... Պատմեց
ինչ յեղել եր, պատմեց այն բոլորը, ինչ յես պատմե-
ցի ձեզ:

— Դե ինչպես բերել ես, ասավ բարկացած,—
այնպես ել գնա յետ բեր քու ձեռքով: Թե չե հոդ ու
մոխիր կշինեմ ձեզ:

Արին ծիծաղեց:

— Հա՛-հա՛-հա՛... Վոնց թե յետ բեր, ասավ.—
յետ չեմ տա յես ԲԱՐՈՒԼՐ Հաղարյան: Կոխվ կուղես,
կոխվ անենք:

Թագավորները ծիծաղ չեն սիրում:

Այդ ծիծաղից մոնչաց Սիպտակ թագավորը, բեր-
նից ծուխ ու կրակ արձակեց, ուզեց բերնի հուրքով
վառն նրան, բայց Արին նետը դրեց աղեղին: Լարեց
աղեղն ու թողեց:

— Վը՛զզ, — անցավ նետը:

Սիպտակ թագավորը գոռաց ահուելի ու թափա-
վեց իր վրանում:


Նրա ձայնից իրար անցան բոլոր դեվերը՝ մեծ ու
փոքր, և վո՛րը վոտով, վո՛րը ձիով փախուստ ամին
ու գնացին:

Գնացին նորից ԶՈՐ-ԶՈՐԱՏԱՆ, Անդ-Անապատ,
ուր քարվան չի քոչում, ուր հավք չի թոչում:

12

Լուրը բերին թագավորին: Թագավորը նորից
յերդեցիկ խմբով, զինավառ զորքով ու մեծ ժողովր-
դով գնաց առաջ:

Յեկան յերկու կողմից հանդիպեցին իրար, պա-
տիվ տվին, պատիվ առան: Փող հնչեցին, ծափ զոր-
կեցին ու կանչեցին.



— Կեցցե՛, կեցցե՛...

— Կեցցե՛ մեր քաջը...

Արին այստեղ մոտեցավ հորը:

— Ինձ ճանաչո՞ւմ ես, Հայրիկ, Հարցրեց:

— ԶԵ՛, ասավ, թագավորը, չեմ ճանաչում:

— Յես քու Արին եմ, ասավ տղան:

Թագավորը չհավատաց:

— Դե վոր դու իմ վորդին ես, ասավ, արի Հա-

զարան Բլբուլին խոսեցրու, վոր մեր չոր այդին կա-
նաչի նորից:

Զորք ու ժողովուրդ նորից գնացին տաճար:

Սառը տաճարում, վանդակի մեջ, բլբուլը նայում
եր մաշված ու խեղճ:

Յեկավ Արին, սեղան յելավ, կանգնեց Բլբուլի
առաջ, գլուխ տվեց, ինչպես կարգն է, հետո հանեց
նրան վանդակից, թողեց ազատ ու ասավ.

— Բլբուլ ջան, խոսիր, թող յոթը տարվա մեր
չոր այդին կանաչի:

Ասավ-չասավ, խոսքի կեսը գեռ բերանում, վան-
դակից ազատված բլբուլն ուրախ թեփին տվեց ու
յերգեց:

Այդ յերգելն եր — մին ել տեսան չոր այդին հա-
գավ զմբուխա կանաչ, ծաղկեցին թուփ ու ծոտ, ծո-
ղիկները բացվեցին, ոգը լցվեց հաղար ձայնով, հա-
ղար ձեվով յերգեցին թոչուները վաղուց լուած, և
նրանց ձայնի վրա հողի միջից, քարի տակից գլուխ-
ները հանեցին նոր ծիլեր ու ծաղիկներ, և ցամաք աղ-
բյուրը զրնգաց...

Այսեղ միայն թագավորը տեսավ, վոր դա իր
վորդին և և ուրախացավ աշխարհովը մին, ու նրա
հետ ամբողջ ժողովուրդը:

Այդ ժամանակ Արին ասավ.

— Դե, հայրիկ, իշխանությունն իմն և յերեք որ:

— Քոնն ե, ասավ հայրը, և թող լինի հավիտյան:

Նստեց Արին հոր տեղը ու յեղբայրներին կանչեց
դատի: Յեկան նրանք՝ Խարին, Չարին, ու խնդրեցին
վոքը յեղբորից ներող լինի իրենց արածի համար:

— Հիմա յես սրանց ի՞նչ պատիժ տամ, հարցրեց
Արին հորից:

— Ինչ վոր գիտես, վորդի, պատասխանեց հայրը
ծեր, — իշխանությունը քոնն է հիմի:

— Դե, քանի վոր, — ասավ Արին յեղբայրնե-
րին, — դուք ինձ չսպանեցիք, յես ել ձեզ չեմ սպանի:

Խնդրում եմ միայն ամեն մեկդ ձեր կնիկը վերցնեք ու
հեռանաք մեր յերկրից, և քանի յես կտմ — եւ իրա-
վունք չունենաք այս հողը գալու:

Սամավ, յեղբայրները — Խարին, Չարին — սեվե-
րես ու ամոթով թողին իրենց տունը հայրական, թո-
ղին իրենց յերկրը, առան իրենց կանանց ու գնացին
ոտար, հեռու յերկրները:

Իսկ ինքը — Արին տեր գարձավ հոր աշխարհին,
և նրա այգին, վոր միշտ փակ եր ժողովրդի համար,
— բաց արավ ամենքի առաջ: Կանչեց բոլորին, և
դրանց հետ բոլոր աղքատներին:

— Դուք, ասավ, զուրկ եք յեղել այս այգուց, ձերն
ե, ասավ, այսուհետ... Զերն են աղբյուրը, ծաղկեկ,
թուփ ու ծառ ու պտուղները բոլոր... Թող ըլինի ել
պտուղ խնդրող մուրացիկ ու մուրացիկ անեծք...

Ասավ ու ժողովուրդն այդ որվանից ամեն որ ու-
րախ-ծիծաղ պտուղում եր հով ծառերի մեջ, մախմուր
կանաչներում, ծիծաղաձայն շատրվանների և զով
աղբյուրների մոտ ու քաղում, վայելում եր պտուղ-
ներն անմահական... Իսկ Հաղարան Բլբուլն այն-
տեղ — այդում — յերգ եր ասում առավոտից մինչ
իրիկուն...

1923

Յերեվան



Պատ. խմբագիր՝ Ռ. Զարյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գևոսպարյան
Սրբագրիչ՝ Ա. Փարստանյան

Դլավլիտի լիազոր կ. 4705. Հրատ. 4254.
Պատվեր 1110. Տիրաժ 6000.
Թուղթ 62×94 Տպադրական $2\frac{3}{4}$ մամուլ.
Մեկ մամուլում 30720 նիշ. Հեեղինակային $21\frac{1}{2}$ մամ.
Հանձնված ե արտադրության 8 սեպտեմբերի 1937
Ստորագրված ե տպադրության 8 դեկտեմբերի 1937

Գինը 1-50

ՀՀ Ազգային գրադարան
NL0400125



ԳԻՒԸ 1 Ա. 60 Կ.

168

8505

СТЕПАН ЗОРЬЯН
АЗАРАН БЛБУԼ
Гиз Арм. ССР, Ереван, 1937 թ.